ԻՐԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑՈՂ ՎԵՐՋԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Գոհար Իսկանդարյան

Ինչպես հայտնի է, մահմեդականների սուրբ տոնի՝ Ռամազանի ավարտի առիթով ամեն տարի Իրանում տեղի է ունենում կոնֆերանս ի պատիվ «ալ-Կուդս»-ի (Երուսաղեմի): Կոնֆերանսում հիմնականում խոսվում է մահմեդականների միասնության և Իսրայել պետության ոչնչացման մասին: Այս տարի էլ կոնֆերանսը՝ «Աշխարհն առանց սիոնիզմի» խորագրով, տեղի ունեցավ 2005թ. հոկտեմբերի 26-ին: Առաջին հայացքից ոչ մի անսովոր բան չկար, քանի դեռ ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադը հանդես չէր եկել ելույթով: Նա հիմնականում կրկնում էր իմամ Խոմեյնիի հայտնի ելույթը: ԻԻՀ նախագահը մասնավորապես նշեց. «Ինչպես ասել է իմամ Խոմեյնին, Իսրայելը պետք է ջնջվի աշխարհի երեսից: Իսլամական աշխարհը թույլ չի տա իր դարավոր թշնամուն ապրել մահմեդական աշխարհի կենտրոնում»: Այնուհետև նա զգուշացրեց Իսրայելի պետությունը ճանաչած մահմեդական երկրների առաջնորդներին, որ «իրենք պատասխան են տալու իրենց ժողովրդի առջև»: Ելույթը պարբերաբար ընդհատվում էր 4000 ուսանողների բուռն ծափահարություններով և «Մահ Իսրայելին», «Մահ ԱՄՆ-ին» բացականչություններով[1]: «Պաղեստինցիների գրոհի նոր ալիքը կոչնչացնի Իսրայել պետությունը: Փառք Աստծո, պաղեստինցիներն ակտիվ են գործում Իսրայելի ռեժիմի դեմ»,- ավելացրել է Ահմադինեժադը: Համաձայն *CNN*-ի՝ ԻԻՀ նախագահը հավելել է. «Եվ Աստծո կամքով, Աստծո զորությամբ, շուտով մենք կտեսնենք աշխարհն առանց Միացյալ Նահանգների և սիոնիզմի»[2]:

Այս հայտարարությանն արագ արձագանքեց ողջ աշխարհը: Սկզբում ԻԻՀ-ում արտասահմանյան դեսպաններից շատերին թվաց, թե խնդիրը թարգմանության հետ է կապված, սակայն հետո պարզ դարձավ, որ թարգմանիչները չեն սխալվել, իսկ Ահմադինեժադը մի քանի օր անց կրկնեց իր

[1] Ahmadinejad: Wipe Israel off map, http://english.aljazeera.net/NR/exeres/15E6BF77-6F91-46EE-A4B5-A3CE0E9957EA.htm

[2] Annan: «Dismay» over Iranian comments on Israel, www.cnn.com/2005/WORLD/meast/10/27/ahmadinejad.reaction/

հայտարարությունը՝ դրանով իսկ ամրագրելով նախորդ ելույթը:

Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իսպանիայի, Գերմանիայի, Կանադայի, Ռուսաստանի Դաշնության արտաքին գերատեսչություններն անմիջապես բացատրություն պահանջեցին Իրանի դեսպաններից: Բնականաբար, առաջինը խստորեն արձագանքեց Իսրայելը: Փոխվարչապետ Շիմոն Փերեսը հայտարարեց. «Մի երկիր, որ սպառնում է մի այլ երկրի ոչնչացմամբ, չի կարող ՄԱԿ անդամ լինել»: Նա գտնում է, որ Իրանին պետք է վտարել ՄԱԿ կազմից[1]: Նա նշել է, որ ՄԱԿ ստեղծումից ի վեր սա առաջին դեպքն է, երբ ՄԱԿ մեկ անդամը կոչ է անում վերացնել ՄԱԿ մեկ այլ պետության, և դա հնչում է նախագահի մակարդակով: «Իրանի տրամադրությունները վտանգավոր են, որովհետև նա ուզում է ստեղծել միջուկային զենք և հեռահար հրթիռներ»,- ասել է Փերեսը: Նրան համակարծիք է նաև Իսրայելի վարչապետ Արիել Շարոնը. «Նման մի երկիր, ունենալով միջուկային զենք, վտանգ է ներկայացնում ո՛չ միայն Իսրայելին ու Միջին Արևելքին, այլ նաև Եվրոպային»[2]:

Իսրայելի արտգործնախարար Սիլվան Շալոմն իր հերթին հայտարարել է. «Հասել է ժամը Իրանի հարցը ՄԱԿ Անվտանգության խորհրդում արծարծելու»: Եվ որքան շուտ դիմեն նման քայլի, այնքան լավ[3]:

Իսրայելին անհանգստացնում է այն փաստը, որ Իրանի զինված ուժերի հսկողության տակ կա «Շահաբ-3» տիպի հրթիռ, որն իրանական կողմի հավաստմամբ՝ հանգիստ կարող է հատել Իսրայելի սահմանը (հրթիռի առավելագույն հեռահարությունը 1500կմ է, իսկ հաշվարկային հեռահարությունը՝ 1300կմ: Հրթիռը մշակվել է հյուսիսկորեական «*Ho Донг-1*» հրթիռի հիմքի վրա)[4]:

Բացի այդ, հրեաները հիշում են դեռևս 1999թ. փետրվարի 7-ին ԻԻՀ պաշտպանության նախարար, փոխծովակալ Ալի Շամխանիի արած հայտարարությունը «Շահաբ-3»-ի փորձարկման ժամանակ, որտեղ նա նշել էր, թե «Շահաբ-3» իրանական հրթիռը երբևէ չի արձակվի որևէ իսլամական երկրի վրա[5]: Հուդայական պետության, այն է՝ Իսրայելի մասին իրանական կողմը լռել էր:

Վաշինգտոնի տվյալներով՝ ներկայումս Իրանը, օգտագործելով Ռուսաստանից և Չինաստանից ստացված տեխնոլոգիաները, ստեղծում է հե-

[1] Иранский президент объединил против себя Вашингтон и Москву, http://www.izvestia.ru/world/article2959049

[2] Ահմադինեժադի վերջին արտայայտությունների բացասական արձագանգները..., http://www.alikonline.com/files/2005/oct/31/31B04.htm/

[3] http://www.alikonline.com/files/2005/oct/31/31B04.htm/

[4] Иран продемонстрировал на параде баллистическую ракету средней дальности «Шахаб-3», www.defense-ua.com/rus/news/?id=10331

[5] ՀՀ Արտաքին գործերի նախարարություն, Պատմադիվանագիտական բաժին (արխիվ), Մերձավոր և Միջին Արևելքի վարչություն, Իրանի բաժին, ցուցակ 5, գործ N 239, էջ 114:

ղուկ վառելանյութով երկու հրթիռ՝ «Շահաբ-3» և «Շահաբ-4», և պինդ վառելանյութով *NP- 110* հրթիռը[1]:

Եթե այս ամենին ավելացնենք Իսրայելի այն կասկածները, թե Իրանը ձգտում է միջուկային զենք ստեղծել, հասկանալի կդառնա նրա անհանգստությունը: Սակայն այս իրավիճակը կարելի է քննարկել երկու հարթությամբ:

Իրանի Իսլամական Հանրապետությունը, բնականաբար, չի պատրաստվում ոչնչացնել Իսրայելը, մանավանդ, եթե հաշվի առնենք այն փաստը, որ Իսրայելը, ըստ որոշ տվյալների, ունի շուրջ 200 միջուկային մարտագլխիկ: Դա կվնասի ինչպես հենց Իրանին (քանի որ Իսրայելն առանց հապաղելու հակահարված կտա), այնպես էլ ողջ տարածաշրջանին:

Մեր կարծիքով, նախագահ Ահմադինեժադի վերոհիշյալ հայտարարությունը, առաջին հերթին, արված է ներքին սպառման համար՝ իր դիրքը կայունացնելու, երկրում առկա ծայրահեղ պահպանողականներին և հոգևորականներին (ովքեր իրենց վստահության քվեն էին հանձնել նախագահական ընտրությունների ժամանակ) գոհացնելու նպատակով: Ընդհանրապես, հոկտեմբեր ամիսը բավական թեժ էր Իրանի համար, այն զանգվածային ցույցերի և ելույթների ամիս էր[2]: Միևնույն ժամանակ, նախագահը չէր կարող չկանխատեսել, որ Իրանի շուրջ առկա լարված մթնոլորտի պայմաններում իր խոսքն անպայման կշահարկվեր ԱՄՆ-ի և Իսրայելի կողմից, որոնք ակնդետ հետևում են Իրանի վարած թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականությանը:

Մասնավորապես, Իսրայելին տրվեց հավելյալ առիթ ուժեղացնելու հակահաբեկչական գործողությունները Հորդանան գետի արևմտյան ափին, որով առավել բարդացան պաղեստինա-իսրայելական հարաբերությունները: Երկիմաստ իրավիճակում հայտնվեց Ռուսաստանը, որը ջանում էր ամեն կերպ Իրանին դրական լույսի ներքո ներկայացնել: Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովը գտնվում էր Իսրայելում և բա-

[1] ՀՀ ԱԳՆ, Պատմադիվանագիտական բաժին (արխիվ), Մերձավոր և Միջին Արևելքի վարչություն, Իրանի բաժին, ցուցակ 5, գործ 240:

[2] Հոկտեմբերին մեկը մյուսի հետևից տեղի էին ունենում զանգվածային ցույցեր արտասահմանյան դիվանագիտական ներկայացուցչությունների առջև: Հոկտեմբերի 3-ին ավելի քան 150 կին բողոքի ակցիա իրականացրին Թեհրանում Մեծ Բրիտանիայի դեսպանատան առջև: Հոկտեմբերի 7-ին 50 կրոնավորներ, ի պաշտպանություն Իրանի միջուկային ծրագրի, նստացույց էին իրականացրել Ֆրանսիայի դեսպանատան մոտակայքում: Հոկտեմբերն աչքի ընկավ նաև ԻԻՀ նախագահի ելույթներով, հատկապես սոցիալական ոլորտի վերաբերյալ: Հոկտեմբերի 23-ին նա նշեց, որ կառավարության գլխավոր խնդիրն է պայքարել կոռուպցիայի դեմ՝ խոստանալով քննել պետական գույքը հափշտակողների հարցը: Նա ուսանողներին խոստացավ իջեցնել բուհերի բարձր վճարները, բնակչությանը ապահովել տնտեսական արդարություն: Բացի այդ, նա խոստացել է, որ տնտեսության արդիականացումը շարունակվելու է, իրականացվելու են բարեփոխումներ բանկային համակարգում: Հոկտեմբերի 3-ին Ահմադինեժադը խոսել է երկրի գյուղատնտեսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման մասին (А.М.Вартанян, Ситуация в Иране в октябре 2005 года, www.iimes.ru/rus/stat/2005/08-11-05a.htm): Այս ամենով պարզ է դառնում, որ ԻԻՀ նախագահ Մ.Ահմադինեժադը ջանում է ամրապնդել իր դիրքերը երկրում և վայելել Իրանի ժողովրդի սերն ու հարգանքը:

նակցում էր հրեաների հետ Պաղեստինի հարցի կարգավորման շուրջ: Նա ևս արձագանքեց ԻԻՀ նախագահի ելույթին՝ նշելով. «Այն, ինչ ես տեսա հեռուստատեսությամբ, իհարկե, անընդունելի է, և մենք այդ մասին կտեղեկացնենք իրանական կողմին: Չեմ կարող չնշել, որ նրանք, ովքեր պնդում էին Իրանի «միջուկային գործը» ՄԱԿ Անվտանգության խորհուրդ հանձնելու վերաբերյալ, ստացան հավելյալ փաստարկներ»[1]:

Ելույթն առաջին հերթին վնասեց Իրանի վարկանիշին Արևմուտքում, քանզի եվրոպական երկրներին այդ հայտարարությունը խիստ վրդովեց: Ֆրանսիայի արտգործնախարար Ֆիլիպ Դուսթ-Բլազին հայտարարեց. «Եթե նախագահն իսկապես հանդես է եկել նման հայտարարությամբ, ապա դա անընդունելի է, և ես ամենայն խստությամբ դատապարտում եմ այն»[2]: *CNN*-ը, առաջինն արձագանքելով ԻԻՀ նախագահի ելույթին, միևնույն ժամանակ ներկայացրեց Սպիտակ տան պաշտոնական ներկայացուցիչ Սքոթ Մքքլելանի հայտարարությունը. «Ահմադինեժադի խոսքը ևս մեկ անգամ հաստատում է այն ամենը, ինչ ասում էր ԱՄՆ-ը Իրանի վարչակազմի վերաբերյալ: Այդ ելույթը միայն ընդգծում է մեր անհանգստությունը միջուկային շրջանակներում Իրանի գործունեության հանդեպ»[3]:

Ուշագրավ է ԻԻՀ նախկին նախագահ Մոհամադ Խաթամիի տեսակետը վերոհիշյալ ելույթի կապակցությամբ. «Այդ խոսքերը բազմաթիվ քաղաքական և տնտեսական խնդիրներ կստեղծեն մեզ համար»[4]: Ելույթով հանդես եկավ նաև Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանին, որը, թեև բացահայտորեն չպաշտպանեց գործող նախագահին, բայց հանդես եկավ իրեն ոչ բնորոշ կոշտ հայտարարություններով: Նա մեղադրեց ԱՄՆ-ին (ի դեպ, նախընտրական պայքարի ժամանակ նա հանդես էր գալիս ԱՄՆ-ի հետ հարաբերությունների վերականգնման օգտին), որ վերջինս տարեկան $4,5 մլրդ դոլար է տրամադրում Իսրայելին: Հաշեմի Ռաֆսանջանին նշեց. «Իսրայելական պետության վարչակազմը իրանական ազգի գլխավոր խնդիրն է»[5]:

Եվրոպական երկրներում գտնվող ԻԻՀ դեսպաններն անմիջապես կանչվեցին արտաքին գործերի նախարարություններ՝ բացատրություն տալու իրենց երկրի նախագահի ելույթի կապակցությամբ: Համարձակորեն կարելի է ասել, որ անհարմար իրավիճակ ստեղծվեց նաև դեսպանների համար, քանզի նրանք իրավամբ ջանում էին բացատրություններ տալ, թեև դա նրանց այնքան էլ չէր հաջողվում:

---

[1] Коммерсант, 28.10.2005.

[2] Annan: «Dismay» over Iranian comments on Israel, www.cnn.com/2005/WORLD/meast/10/27/ahmadinejad.reaction/

[3] Նույն տեղում:

[4] Ahmadinejad's Israel Remarks Split Iran, www.washingtonpost.com/wp-dyn/content/article/2005/10/31/AR2005103100003.html

[5] А.М.Вартанян, Ситуация в Иране в октябре 2005 года, www.iimes.ru/rus/stat/2005/08-11-05a.htm

«Երկիր Մեդիա» հեռուստաընկերությանը տված հարցազրույցի ժամանակ ՀՀ-ում ԻԻՀ դեսպան Ալիռեզա Հաղիղյանը փորձեց պարզաբանել նախագահի խոսքերը: Հարկ ենք համարում մեջ բերել նրա խոսքերը. «ԻԻՀ-ն հավատարիմ է եղել ՄԱԿ կանոնադրությամբ նախատեսված իր պարտավորություններին և երբևէ այլ երկրի դեմ ուժ չի կիրառել ու չի սպառնացել ուժի կիրառմամբ, մինչդեռ Իսրայելը և ՄԱԿ ԱԽ մշտական որոշ երկրներ (խոսքն, առաջին հերթին, ԱՄՆ-ի մասին է) քանիցս սպառնացել են ուժ կիրառել ԻԻՀ-ի դեմ: ԻԻՀ նախագահը, ելույթ ունենալով ՄԱԿ Գլխավոր խորհրդաժողովի 60-րդ նիստին, հայտնել է իր դիրքորոշումը, որ Պաղեստինում հարատև խաղաղության կարելի է հասնել արդարության հաստատման և խտրականության վերացման շնորհիվ: Պետք է վերջ տալ Պաղեստինի տարածքների գրավմանը, պաղեստինցի բոլոր փախստականները պետք է վերադարձվեն, անհրաժեշտ է անցկացնել համաժողովրդական ընտրություններ և նպաստել Պաղեստինի ժողովրդավարական պետության ստեղծմանը»:

Եթե Իրանի շուրջ լարվածությունն այդքան մեծ չլիներ, ապա համաշխարհային հանրությունը հազիվ թե այդքան սուր անդրադառնար հակահրեական նման հայտարարությանը, որը նորություն չէր ոչ մեկի համար:

ԻՌՆԱ գործակալության 2005թ. նոյեմբերի 1-ի տեղեկատվության համաձայն՝ հետ են կանչվել Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում և Մալայզիայում ԻԻՀ դեսպանները: Իրանի արտաքին գերատեսչությունը դա բացատրում է դեսպանների գործունեության ժամկետի լրացմամբ, սակայն Մեջլիսում Ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության հանձնաժողովի նախագահ Քազեմ Ջալալին, հակադրվելով ԻԻՀ ԱԳՆ հայտարարությանը, նշում է. «Մալայզիայում մեր դեսպան Ամիր Հոսեյն Զամանի-Նիյան նշանակվել էր վերջերս, և արտաքին գերատեսչության բացատրությունը չի համապատասխանում նրա դեպքին»[1]: Նրա խոսքերի համաձայն՝ Իրանի Արտաքին գործերի նախարարությունը առաջիկա չորս ամիսների ընթացքում պատրաստվում է հետ կանչել 30-40 դեսպանների: Սակայն դա կարելի է բացատրել նաև այլ կերպ. նախագահական ընտրություններից հետո անհրաժեշտ է փոխել դիվանագիտական կազմը և արտասահմանյան երկրներ ուղարկել նոր նախագահ Ահմադինեժադի գաղափարակիցներին:

Սակայն այս ամենով լարված իրավիճակը չհանդարտվեց: Նախագահի ելույթից և դեսպանների «բացատրություններից» մի քանի օր անց երկու պայթյուն է գրանցվում Թեհրանում. մեկը՝ «Բրիթիշ Փեթրոլիում»-ի, մյուսը՝ «Բրիթիշ Աիրվեյզ»-ի գրասենյակների մոտ:

Համաձայն *Sky News*-ի ինտերնետային կայքի՝ նոյեմբերի 2-ին Թեհ-

[1] Меджлис Ирана рассмотрит вопрос об отзыве иранских послов из ряда стран, ИРНА, 1 ноября 2005г, www.irna.ir/ru/news/view/line-64/0511016268173714.htm

բանի վերոհիշյալ գրասենյակների մոտ տեղի ունեցած պայթյունի հետևանքով չկան զոհեր և վիրավորներ, կոտրվել են միայն գրասենյակի պատուհանները և խուճապ առաջացրել աշխատողների մոտ: Խնդիրն այն է, որ 2005թ. օգոստոսին ևս տեղի էր ունեցել նմանօրինակ պայթյուն, կրկին վերոհիշյալ գրասենյակների մոտ: Իրանի և Մեծ Բրիտանիայի հարաբերություններում այժմ նկատվում է որոշակի լարվածություն: Հայտնի ծայրահեղական ոչ մի խմբակցություն հանձն չի առել պայթյունների պատասխանատվությունը, և ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ պայթյունն իրականացնողները չեն հայտնաբերվել[1]:

Նոյեմբերի 3-ին Թեհրանում տեղի ունեցավ հերթական ցույցը, այս անգամ ԻԻՀ-ում Իտալիայի դեսպանատան առջև: Ցույցի մասնակից ուսանողները բողոքում էին Հռոմի որդեգրած քաղաքականության դեմ: Հիշեցնենք, որ Իտալիայի ԱԳ նախարար Ջանֆրանկո Ֆինին հրեա գործընկերոջ՝ Սիլվան Շալոմի ներկայությամբ նշել է, թե Հռոմը հանդես է գալիս ի պաշտպանություն Իրանի միջուկային գործը ՄԱԿ Անվտանգության խորհրդին հանձնելուն: Նրա կարծիքով, միջուկային Իրանը սպառնալիք է ոչ միայն Իսրայելի, այլև միջազգային ողջ հանրության համար[2]:

Համաձայն ԻՌՆԱ գործակալության՝ 2005թ. նոյեմբերի 7-ին Բրյուսելում տեղի ունեցած Եվրամիության 25 երկրների արտգործնախարարների ժողովի մասնակիցները կրկին քննադատեցին ԻԻՀ նախագահի ելույթը: Այդ կապակցությամբ ԻԻՀ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Համիդ Ռեզա Ասեֆին դժգոհություն արտահայտեց՝ մասնավորապես նշելով. «Չնայած Պաղեստինում Իսրայելի սիոնիստական վարչակազմի ամենօրյա ոճրագործություններին՝ Եվրամիությունն իր հայտարարությունում անուշադրության է մատնել պաղեստինցիների ոտնահարված իրավունքներն այդ վարչակազմի կողմից: Միջազգային հանրությունը և հատկապես մահմեդական աշխարհն ակնկալում են Եվրամիությունից առավել պատասխանատու մոտեցում վերոհիշյալ օրինախախտումների և ոճրագործությունների կապակցությամբ»[3]:

Իրանում տեղի ունեցած վերոբերյալ զարգացումներից հետո, ամենայն հավանականությամբ, քննարկվել է նաև ռազմական ուժով հարցը լուծելու տարբերակը, սակայն Միացյալ Նահանգները չի կարող հաշվի չառնել մի քանի հանգամանք.

1. նախևառաջ՝ Իրաքի չկարգավորված հարցը, մանավանդ որ ԱՄՆ հասարակությունը, տեղեկանալով Իրաքում զոհված իրենց զինվորների

[1] Blast At British Offices, www.sky.com/skynews/article/0,,30000-1201213,00.html, Иранские террористы напугали британцев хлопушкой, www.lenta.ru/news/2005/11/02/teheran1/

[2] Иранские студенты провели акцию протеста у посольства Италии, ИРНА, 3 ноября 2005г, www.irna.ir/ru/news/view/line-62/0511035403171404.htm

[3] Хамид-Реза Асефи осудил заявления глав МИД стран Европейского союза, www.irna.ir/ru/news/view/line-64/0511084724160335.htm

թվաքանակի մասին, պահանջում է շտապ դուրս բերել ամերիկյան զորքը Իրաքի տարածքից, ինչը, մեր կարծիքով, մոտ ապագայում չի իրականացվի: Ամբողջովին չի կարգավորվել նաև Աֆղանստանի իրավիճակը,

2. պատերազմի բռնկման դեպքում Իրանը կարող է փակել Հորմուզի նեղուցը՝ Բենդեր Աբասում ոչնչացնելով մի քանի լցանավ (տանկեր), ինչի հետևանքով Իրաքի, Քուվեյթի, Էմիրաթների, Կատարի և Սաուդյան Արաբիայի նավթը հնարավոր չի լինի արտահանել Պարսից ծոցից, ինչը կարող է առաջացնել ճգնաժամային իրավիճակ էներգակիրների շուկայում:

Հարկ է նշել, որ «նեոկոնսերվատոր» Ռիչարդ Փերլն առաջարկում է հարցի լուծման այլ տարբերակ: Իրանը համեմատելով «կավե ոտքերով հսկայի» հետ՝ նա մատնանշում է, թե անհրաժեշտ է միայն աջակցել Իրանի խռովարար ուսանողներին, ազգայնական շարժմանը և թագավորամետ ուժերին, քանի որ հենց նրանք էլ վերջ կտան Իրանի Իսլամական Հանրապետությանը[1]:

Ազգայնական շարժում ասելով Ռ.Փերլն առաջին հերթին նկատի ունի իրանական Ադրբեջանի և իրանական Քրդստանի նահանգները, որոնք միշտ էլ հավակնել են լինել կա՛մ անկախ, կա՛մ գոնե լայն իրավունքներով օժտված: Երկար տարիներ ադրբեջանցիներն Իրանի տարածքում նույնիսկ սեփական դպրոց ունենալու իրավունք չեն ունեցել, որից, ի դեպ, երբեք զուրկ չեն եղել հայերը: Սակայն այսօր պատկերը փոխվում է՝ հաշվի առնելով հատկապես ադրբեջանցիների թվաքանակի աճը: Իրանում նրանց թիվը, մոտավոր տվյալներով, հաշվվում է 20 մլն, իսկ համաձայն այլ տվյալների՝ նրանց թիվն աճել է՝ հասնելով 30 մլն-ի[2]: Եթե ընդունենք վերջին թվի հավաստի լինելու փաստը, միևնույն ժամանակ արձանագրենք, որ Իրանում բնակվում է մոտ 65 մլն մարդ, ապա Իրանի բնակչության կեսը պետք է որ ադրբեջանցիներ լինեն, ինչն արդեն մտահոգիչ է: Համաձայն վերոհիշյալ տեղեկատվության՝ «Ազերիները կամ թրքախոս իրանցիները հիմնականում բնակվում են երկրի հյուսիսային նահանգներում, որոշ նահանգներում նրանք կազմում են բնակչության 80-90%-ը»[3]: Այսօր Իրանի ղեկավար շրջաններում ևս նկատվում է ազգությամբ ազերիների թվային աճի միտում:

Կարծում ենք, այս ամենը քաջ գիտակցելով՝ ԱՄՆ-ը ավելի շուտ կփորձի օգտվել վերը շարադրված խոցելի պահերից, քան կդիմի ուժի, ինչով էլ պայմանավորված է Իրանի նկատմամբ ԱՄՆ գործողությունների հանդարտ ընթացքը:

---

[1] Коммерсант, 08.02.2005.
[2] ՀՀ Արտաքին գործերի նախարարություն, Մերձավոր և Միջին Արևելքի վարչություն, Թուրքիայի բաժին, ցուցակ 5, գործ N 243, # 05-31,12.05.1999թ.:
[3] Նույն տեղում: